Հայտարարագրման համակարգի վերլուծաբան և խորհրդատու

Անգլերեն հղումը՝

https://careercenter.am/en/jobs/asset-declarations-business-systems-analyst-and-advisor?category_id=&search=&status=all&type=1&view=classic

Տևողությունը: 4-6 ամիս, պահանջներին համապատասխանելու դեպքում ԿԿՀ-ում հետագա աշխատանքի ընդունվելու հնարավորությամբ:

Վերջնաժամկետը: 18 սեպտեմբերի 2021թ.:

Նկարագրությունը: ԱՄՆ-ում գտնվող միջազգային զարգացման Checchi and Company Consulting ընկերություն ԱՄՆ ՄԶԳ օգնությամբ իրականացնում է Հայաստանում բարեվարքության նախագիծ: Բարեվարքության նախագծի նպատակն է Հայաստանում նվազեցնել կոռուպցիայի հնարավորությունները և ամրապնդել բարելավված կառավարման նկատմամբ հանրային պահանջն ու հաշվետվողականությունը՝ ուժեղացնելով կոռուպցիայի կանխարգելման ինստիտուտները և բարեվարքության համակարգը, օժանդակելով կոռուպցիայի կանխարգելման համար մասնավոր իրավական կարգավորումների կիրառմանը, ինչպես նաև հեշտացնելով հավաքական մոտեցման գործողությունները կոռուպցիայի կանխարգելման շրջանակներում տեղական մարմիններին փոխադարձ հաշվետու պահելու համար:

Նպատակը: Checchi-ն փնտրում է ՀՀ որակավորված քաղաքացիների Հայտարարագրման համակարգի վերլուծաբան և խորհրդատու, ովքեր սերտորեն աշխատելու են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների և Հայտարարագրերի վերլուծության վարչության աշխատակիցների հետ՝ կատարելով հայտարարագրերի վերլուծության ամենօրյա աշխատանքներ:

Պարտականությունները: Հայտարարագրման համակարգի վերլուծաբանը և խորհրդատուն պատասխանատու են ԿԿՀ-ին տեխնիկական աջակցություն ցուցաբերել հետևյալ ոլորտներում.

- Աջակցել ԿԿՀ-ին ստեղծել գույքի և եկամուտների հայտարարագրման վերլուծության արդյունավետ համակարգ և օգնել ԿԿՀ-ին զարգացնել անձնակազմի՝ պաշտոնատար անձանց հայտարարագրերի վերլուծություն կատարելու հմտությունները, մասնավորապես,
- Ամենօրյա աշխատանք՝ հայտարարագրերի վերլուծության նպատակով անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրելու համար,
- Նույնականացնել այն պետական ինստիտուտներին, որտեղ անհրաժեշտ է ուղարկել հարցումներ և ստանալ լրացուցիչ տեղեկատվություն,
- Հայտարարատուից հավելյալ տեղեկատվություն կամ որոշ հարցերի վերաբերյալ հիմնավորումներ ստանալու համար մշակել հարցաշար,

- Պատրաստել առաջարկություններ իրավիճակային հայտարարագրերի վերաբերյալ,
- Պատրաստել հիմնավորումներ անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկ լրացուցիչ հարցումներ ուղարկելու համար,
- Իրականացնել այլ պետական մարմիններից ստացված տեղեկատվության և հայտարարագրում ներկայացված տեղեկատվության համեմատական վերլուծություն,
- Համակարգել տվյալների համակարգման, օգտագործման և ԿԿՀ աշխատակիցների միջև հանձնարարությունների բաշխման աշխատանքները,
- Վերահսկել հայտարարագրերի վերլուծության պլանի քայլ առ քայլ իրագործումը,
- ԿԿՀ աշխատակիցներին տրամադրել հստակ ուղեցույցներ հայտարարագրերի վերլուծության համար առկա տեղեկատվության տեսակի և համադրության վերաբերյալ,
- Վերանայել/վերահսկել վերլուծության գործընթացը և աջակցել այն բարելավելու գործում:

Ակնկալիքները՝

- Հայտարարագրերի վերլուծության վերահսկողության ամենօրյա աշխատանք,
- Հայտարարագրերի վերլուծության բարելավման առաջարկությունների ներկայացում:

Անհրաժեշտ որակավորումները:

- Մագիստրոսի աստիճան,
- Ֆինանսական վերլուծության և/կամ աուդիտի ոլորտում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ,
- MS Excel լավ իմացություն,
- Վերլուծական և հետազոտական հմտություններ,
- Քննադատական մտածողություն,
- Հաղորդակցման հմտություններ,
- Էթիկայի բարձր մակարդակ,
- Կազմակերպչական և ներանձնային հաղորդակցության հմտություններ և բարդ խնդիրները լուծելու կարողություն:

Դիմելու կարգը:

Հետաքրքրված անձինք պետք է ուղարկեն համառոտ մոտիվացիոն նամակ և ինքնակենսագրական Armeniajobs@checchiconsulting.com էլեկտրոնային հասցեին մինչև փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը: Խնդրում ենք նամակի

վերնագրում նշել հաստիքի անվանումը (Հայտարարագրման համակարգի վերլուծաբան և խորհրդատու):